ՄԱԳՆՈԼԻԱՅԻ ՀՐԱՇԱԼԻ ՀԱՅՐԸ

Մերիէլեն Ջոնսոն Վան Էնգելենհովեն
(Հիմնված է իրական պատմության վրա:

«Որոշ երեխաներ ասացին, որ մենք լավ ընտանիք չենք, քանի որ հայրս մեր եկեղեցու անդամ չէ»:

Այս պատմությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ում:

«Մագնոլիա: Լիլի»: Կանչեց հայրիկը: «Սուրբ գրությունների և աղոթքի ժամն է»:

Մագնոլիան փռվեց հատակին՝ իրենց շան կողքին: Լիլին փաթաթվեց իր սիրելի ծածկոցի մեջ:

Սուրբ գրությունների ընտանեկան ժամը զվարճալի էր: Երբեմն նրանք միասին բեմադրում էին սուրբ գրությունների պատմությունները: Դա օգնում էր Մագնոլիային պատկերավոր դարձնել պատմությունները: Բացի դրանից, շունը միշտ օգնում էր, երբ կենդանիներ էին լինում պատմության մեջ:

Հայրիկը բացում էր իր սուրբ գրությունները և կարդում մի հատված: Սպա նա փոխանցում էր մեծ, ծանր Աստվածաշունչը Մագնոլիային: Նրանք հերթով կարդում էին:

«Միմյանց հետ քա՛ղցր եղեք»,- կարդաց Մագնոլիան:*

Նա մոռայլվեց: Մարդիկ ոչ միշտ էին բարի գտնվում նրա հանդեպ եկեղեցում:

«Սամ, պապ, կարո՞ղ եմ մի բան ասել ձեզ»,- հարցրեց նա:

«Իհարկե»,- պատասխանեց մայրիկը: «Ի՞նչ է պատահել»:

«Երեկ Երեխաների միությունում որոշ երեխաներ ասացին, որ մենք լավ ընտանիք չենք, քանի որ հայրս մեր եկեղեցու անդամ չէ»:

Մագնոլիայի հայրը մեկ այլ եկեղեցու անդամ էր: Նա կիրակի օրերին գնում էր հաղորդության ժողովի իրենց ընտանիքի հետ: Լիլիի և Մագնոլիայի մկրտությունների ժամանակ նա ելույթներ է ունեցել Սուրբ Հոգու մասին: Բոլորը շատ գոհ էին նրա ելույթներից: Նա հրաշալի հայր էր:

«Նրանց ասածներից ես ուզում էի լաց լինել»: Շշնջաց Մագնոլիան: «Ինչո՞ւ են մարդիկ այդքան անբարյացակամ»:

Մայրն ու հայրը նայեցին իրար:

«Ես ուրախ եմ, որ դու պատմեցիր մեզ պատահածի մասին», - ասաց հայրիկը: «Ես և մայրդ շատ ենք սիրում իրար: Եվ մեր ընտանիքը շատ կարևոր է մեզ համար»:

Մայրը գլխով արեց: «Եվ մեր ընտանիքը կարևոր է նաև Երկնային Հոր համար: Նա սիրում է իր բոլոր զավակներին»:

Շունը փարվեց Մագնոլիային: Նա շոյեց նրա ականջները:

«Երկնային Հայրը գիտի մեզ, և Նա գիտի, որ մենք սիրում ենք իրար»,- ասաց հայրիկը: «Ոչ մի ընտանիք կատարյալ չէ, բայց մենք կարող ենք փորձել անելու լավագույնը»:

«Մակայն ցավոտ է, երբ մարդիկ չարախոսում են մեր ընտանիքի մասին»,- ասաց Մագնոլիան: «Հիսուսն ուսուցանել է մեզ բարի լինել բոլորի հանդեպ: Չարախոսելով չենք կարող հետևել Հիսուսին»:

«Դու իրավացի ես»,- ասաց հայրիկը: «Գուցե երբ դու երբևէ ցանկություն ունենաս չարախոսելու, հիշես, թե ինչ ես զգացել, երբ ուրիշներն անբարյացակամ են եղել քո հանդեպ: Սպա դու կարող ես փոխարենը մի լավ բան ասել:

Մագնոլիան խորը շունչ քաշեց: «Լավ»: Նա ուրախ էր, որ կարողացավ խոսել մայրիկի ու հայրիկի հետ:

«Ընտանեկան սենդվիչի ժամանակն է»: Հայրիկն իր գրկում ամուր սեղմեց Լիլիին և Մագնոլիային: Մայրիկն իր ձեռքերը տարածեց նրանց երեքի շուրջը: Շնիկը պտտվում էր բոլորի շուրջը:

«Ես չեմ կարողանում շնչել»,- կատակեց Լիլին: Մագնոլիան ծիծաղեց:

«Այժմ հիշեցրեք ինձ՝ ո՞ւմ հերթն է կարդալու»,- հարցրեց հայրիկը: Նա ազատ արձակեց աղջիկներին և վերցրեց իր սուրբ գրությունները:

«Իմ հերթն է»,- ասաց Լիլին: «Եվ հայրիկի աղոթելու հերթն է»:

Երբ նրանք ավարտեցին կարդալը, բոլորը ծնկի իջան աղոթելու: Մագնոլիան խաղաղություն զգաց, մինչ լսում էր հայրիկի աղոթքը: Նա գիտեր, որ Երկնային Հայրը սիրում էր իր ընտանիքին: ●



Դարձ. Կոնստանտին Բալաբանովի

*Եփեսացիս 4.32